

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ/CONTRACT

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՇԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՔՏԱՆ-ԳԶԾ-2020/01

STATE CONTRACT
ON PROVIDING SERVICES FOR STATE NEEDS

No BTAN-GChTs-2020/01

city of Yerevan

23 march 2020

ք. Երևան

23 մարտի 2020թ.

«Ը բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գլխավոր քարտուղար Շաքե Մեյլումյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա մի կողմից, և Հայկական բարեգործական ընդհանուր միություն» (ՀԲԸՄ) շահույթ չհետապնդող կազմակերպությունը, որը գործում է Դելավեր նահանգի օրենսդրության համաձայն, գրանցված է Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Նյու Յորք նահանգ 10022-1112, ք.Նյու Յորք, 55-րդ Արևելյան 59-րդ փողոց հասցեով, (այսուհետ՝ Կատարող), ի դեմս ՀԲԸՄ կենտրոնական վարչության անդամ Վասկեն Յակոբյանի, որը գործում է լիազորագրի հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, Պատվիրատուն և Կատարողը հետայսու միասնաբար կանվանվեն «Կողմեր», իսկ յուրաքանչյուրն առանձին նաև՝ «Կողմ», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

The Ministry of High-Tech Industry of the Republic of Armenia (hereinafter referred to as "the Client"), represented by Shaqe Mejlumyan, secretary General, acting on the basis of the Statute of the Ministry on the one hand, and Armenian General Benevolent Union (AGBU), a non-profit organization, existing under the laws of the State of Delaware, with registered address at 55 East 59th Street, New York, NY 10022 United States of America, (hereinafter referred to as "the Executor"), represented by the AGBU Central Board Member Vasken Yacoubian, acting based on the power of attorney, on the other hand, the Client and Executor shall hereinafter be collectively referred to as the "Parties", and separately also as the "Party", concluded this Contract on the following.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. SUBJECT MATTER OF THE CONTRACT

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագրի շրջանակներում ծառայությունների մատուցման և կազմակերպման կատարման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.1 The Client shall assign, and the Executor shall undertake the obligation of carrying out provision and organisation of services within the scope of the Programme "Armenian Virtual Bridge" (hereinafter referred to as "service"), pursuant to the requirements of Technical Specification-Procurement Schedule prescribed by Annex No 1 constituting an inseparable part of this Contract (hereinafter referred to as "the Contract").

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.2 The service shall be provided in compliance with Technical Specification-Procurement Schedule prescribed by Annex No 1 and within the time limits prescribed.

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. RIGHTS AND RESPONSIBILITIES OF THE PARTIES

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1. The Client shall have the right:

2.1.1 Յանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.1 To check, any time, the course and quality of the service provided by the Executor, without intervening in activities of the latter:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

2.1.2 Where a service not complying with Technical Specification-Procurement Schedule indicated in Annex No 1 to the Contract is provided:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ

(a) Not to accept the service, prescribing a reasonable time limit upon his or her discretion for gratuitous substitution of the service of improper quality with a service complying with the Contract, and request from the Executor to pay the fine provided for by point 5.2, as well as the penalty provided for by point 5.3 of the Contract;

անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ:

(b) To refuse to perform the Contract and request to return the amount paid for the service, as well as request from the Executor to pay the fine provided for by point 5.2 of the Contract;

2.1.3 To unilaterally rescind the Contract, where the Executor has substantially violated the Contract. Violation of the Contract by the Executor shall be deemed to be substantial, where:

(a) the service provided fails to comply with the requirements prescribed by Annex No 1 to the Contract;

(b) the time limit for provision of the service has been violated.

2.2. The Client shall be obliged:

2.2.1 To discuss and accept the results of the service provided in compliance with Technical Specification-Procurement Schedule, and in case of detecting shortcomings as a result of the service – immediately inform the Executor thereon in writing.

2.2.2 To pay – in case of accepting the results of the service – the Executor the amounts payable to the latter, and in case of violation of the time limit – also the penalty provided for by point 5.5 of the Contract.

2.3. The Executor shall have the right:

2.3.1 To request from the Client to pay the amounts payable thereto, and in case of violation of the time limit indicated in point 4.2 of the Contract by the Client – also the penalty provided for by point 5.5 of the Contract.

2.4. The Executor shall be obliged:

2.4.1 To ensure provision of the service under the conditions prescribed by Annex No 1 to the Contract, governed by the existing legislation.

2.4.2 In cases provided for by the Contract, to pay the penalty and fine provided for in points 5.2 and 5.3 of the Contract.

2.4.3 In case of commencing a process of liquidation or bankruptcy during the term of validity of contract performance security to inform the client there in order in writing

3. PROCEDURE FOR DELIVERY AND ACCEPTANCE OF THE SERVICE

3.1 The provided service shall be accepted by signing a Delivery and Acceptance Protocol between the Client and the Executor. The fact of delivering the service to the Client shall be fixed with a document mutually approved by the Client and the Executor,

Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 694,050, 000 (վեց հարյուր ինսուևսորս միլիոն հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ 100,000,000 (մեկ հարյուր միլիոն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող

indicating the date of drawing up the document.

Before the day provided for by the Contract for provision of the service, the Executor shall provide the Client with the document stating the fact of transfer of the service signed thereby (Annex No 3.1) and 2 copies of the Delivery and Acceptance Protocol (Annex No 3).

3.2 The Delivery and Acceptance Protocol shall be signed, where the provided service complies with the terms of the Contract. Otherwise, the results of performance of the Contract or a part thereof shall not be accepted, the Delivery and Acceptance Protocol shall not be signed and the Client shall:

- (a) undertake measures provided for by the Contract for such situation to regulate the issue;
- (b) apply measures of liability provided for by the Contract against the Executor.

3.3 The Client shall, within 5 working days counted from the working day following the day of receipt of the Delivery and Acceptance Protocol, submit to the Executor one copy of the Delivery and Acceptance Protocol signed thereby or the justified rejection for not accepting the service.

3.4 Where the Client does not accept the provided service or does not reject acceptance thereof within the period prescribed by point 3.3 of the Contract, the provided service shall be deemed to be accepted, and the Client shall provide to the Executor – on the working day following the deadline prescribed by point 3.3 of the Contract – the Delivery and Acceptance Protocol approved by the Client.

4. CONTRACT PRICE

4.1 According to this Contract, the maximum price of the service to be provided by the Executor comprises AMD 694,050, 000 (six hundred ninety-four million and fifty thousand).

The price includes all the expenses made by the Executor, including taxes, duties and other payments prescribed by the legislation.

The price for providing the Service is stable and the Executor and Client are not entitled to require respectively increasing and decreasing that price.

4.1.1. 100,000,000 (one hundred million) AMD of the cost of Contract shall be transferred to the bank account of the Executor by the Client as an advance payment. Repayment of the advance payment is made in the form of reducing (deductions) the payments based on the Delivery and Acceptance Protocols. Moreover, no

վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, բայց ոչ ավել քան պայմանագրի ընդհանուր գնի 5%-ը:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

payments shall be made to the Executor before the entire repayment of the advance payment.

4.2 The Client shall pay for the services provided thereto in Armenian drams, in a non-cash form, by transferring the funds to the settlement account of the Executor. Transfer of monetary funds shall be made on the basis of the Transfer and Acceptance Protocol, in the amounts and months provided for by the payment schedule of the Contract (Annex No 2). Where the protocol is drawn up after the 20th day of the given month and financial means are envisaged during that month by the payment schedule, the payment shall be made within 30 working days but not later than before 30 December of the given year.

5. LIABILITY OF PARTIES

5.1 The Executor shall bear liability for observing the requirements of the contract for provision of services.

5.2 In each case of providing a service not complying with the technical specification indicated in Annex No 1 to the Contract, a fine shall be charged from the Executor in the amount of 0.5 (zero point five) per cent of the amount provided for by point 4.1 of the Contract. Moreover, the fine shall be calculated also in the case the service is provided within the time limit prescribed by this Contract but not accepted by the Client.

5.3 In case of violation of the time limit for the provision of the service provided for by the Contract, a penalty shall be charged from the Executor for each delayed day in the amount of 0,05 (zero point five hundredth) per cent of the price of the service subject to provision but not having been provided, but for not more than 5% of the total value of the contract.

5.4 The fine and the penalty provided for by points 5.2 and 5.3 of the Contract shall be calculated and offset along with the amounts subject to payment to the Executor.

5.5 In case the Client violates the time limit provided for by point 4.2 of the Contract, a penalty shall be calculated against the Client for each delayed day in the amount of 0,05 (zero point five hundredth) per cent of the amount subject to payment but not having been paid.

5.6 In cases not provided for by the Contract, the Parties shall be held liable for non-performance or improper performance of obligations thereof, as prescribed by the legislation of the Republic of Armenia.

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.7 The payment of penalties and/or the fine shall not exempt the Parties from the full performance of their contractual obligations.

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. FORCE MAJEURE

The Parties shall be exempt from liability for the failure to fully or partially fulfil the obligations envisaged by this Contract and the agreements concluded based on this Contract, where it occurred due to force majeure which arose after the conclusion of this Contract and which the Parties could not have foreseen or prevented. Such situations shall be earthquake, flood, fire, war, declaring martial law and state of emergency, political disturbances, strikes, termination of the operation of communication means, acts of the state bodies, etc., that make the fulfilment of the obligations assumed under this Contract impossible. Where the effect of the force majeure continues for more than 3 (three) months, each of the Parties shall have the right to rescind the Contract by informing in advance the other Party thereon.

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7. OTHER CONDITIONS

7.1 The Contract shall enter into force from the moment of signing by the Parties and shall be in effect until the full performance by the Parties of the obligations assumed by the Contract.

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.2 The payment obligation of the Party having arisen from the Contract may not terminate with the offset of a counter-obligation having arisen from another contract, without the written consent of the parties confirmed with a seal. The right of claim having arisen from the Contract may not be transferred to another person without the written consent of the debtor party.

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար

7.3 Where as a result of control or supervision over compliance with the requirements of law or as a result of examination of appeals as prescribed by law it is concluded that – in the procurement process, prior to the conclusion of the Contract – the Executor had submitted false documents (information and data) or the decision on declaring him or her as a selected bidder does not comply with the legislation of the Republic of Armenia, the Client shall – upon the emergence of these grounds – be entitled to unilaterally rescind the Contract, where, pursuant to the legislation of the Republic of Armenia on procurement, the detected deficiencies having emerged prior to the conclusion of the Contract would have served as a ground for not concluding the Contract. Moreover, the Client shall not bear the risk of losses occurring for or lost profit of the Executor as a result of unilateral rescission of the Contract, and the latter shall be obliged to compensate for the losses suffered by the Client by his or her fault, as prescribed

առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

by the law of the Republic of Armenia and to the extent to which the Contract has been rescinded.

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.4 Disputes with regard to the Contract shall be subject to examination in the courts of the Republic of Armenia.

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

7.5 Amendments and supplements may be made to the Contract only upon mutual consent of the Parties, by way of conclusion of an agreement that will become the inseparable part of the Contract.

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ:

7.6 The time limit for providing the service may be extended only upon mutual consent of the Parties until the expiry of that time limit under the Contract, in case of existence of a recommendation of the Executor, provided that the request for the use of the service has not been eliminated and the recommendation of the Executor has been submitted not later than at least 5 calendar days before the expiry of the time limit initially prescribed by the Contract for providing the services.

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

7.7 In case of proper performance of this Contract, the benefits (savings) of or damages incurred by the Parties (Executor or Client) shall be deemed to be the benefit of or damage incurred by the given Party.

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

The obligations of the Parties to the Contract with respect to third parties, including other transactions concluded by the Executor within the scope of performance of the Contract and the obligations arising therefrom, shall be beyond the scope of regulation of the Contract and may not impact the acceptance of the result of performance of the Contract. The relations pertaining to such transactions and the obligations arising therefrom shall be regulated by the norms regulating the relations pertaining to those transactions, and the Executor shall be liable for them.

7.8 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Disputes arising with regard to this Contract shall be settled through negotiations. In case of failure to reach an agreement, the disputes shall be settled in the courts of the Republic of Armenia.

7.9 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 This Contract is composed of 7 pages, it is concluded in two copies of equal legal effect. Annexes No 1, No 2, No 3 and No 3.1 to this Contract shall be the inseparable part of the Contract, and each Party shall be provided with one copy of the Contract.

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.10 The applicable law for this Contract shall be that of the Republic of Armenia.

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱԴԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. ADDRESSES, BANK DETAILS AND SIGNATURES OF PARTIES

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության
նախարարություն
Ք. Երևան Վ.Սարգսյան 3/3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011031938
ՀՎՀՀ 02565518

CLIENT

Ministry of High-Tech Industry
of the Republic of Armenia
3/3 V. Sargsyan Street, city of Yerevan
Operational Department of the Ministry of Finance of the Republic
of Armenia
No 900011031938
TIN 02565518

Գլխավոր քարտուղար
Շ. Մեյլումյան



/ստորագրություն/
Կ.Տ

Secretary General
S. Mejlumyan



/signature/

Seal

ԿԱՏԱՐՈՂ

EXECUTOR

Հայկական բարեգործական ընդհանուր միություն
Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Նյու Յորք նահանգ
10022-1112, ք.Նյու Յորք, 55-րդ Արևելյան 59-րդ փողոց

Armenian General Benevolent Union
55 East 59th Street, New York, NY 10022-1112

Email: agbuny@agbu.org
Բանկ.

Email: agbuny@agbu.org

CITIBANK, N.A. (Private Banking Department), 153 East 53rd Street,
24th Floor, New York, NY 10022

CITIBANK, N.A. (Private Banking Department), 153 East 53rd
Street, 24th Floor, New York, NY 10022

Attn: Mr. Edeel Khokhar, Client Service Officer

Attn: Mr. Edeel Khokhar, Client Service Officer

ABA #: 021-000089

ABA #: 021-000089

Swift No.: CITIUS33

Swift No.: CITIUS33

Beneficiary/to the credit of:

Beneficiary/to the credit of:

Account # 999-5787841

Account # 999-5787841

ՀԲԸՄ կենտրոնական վարչության անդամ
Վասկեն Իսկուբյան

Vasken Yacoubian
AGBU Central Board Member

/ստորագրություն/
Կ.Տ

/signature/

Seal

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	99600000/1	«Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագրի շրջանակներում ծառայությունների մատուցում և կազմակերպում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ ԱՄՆ-ում: տեխնիկական բնութագիրը կցվում է****	դրամ	694,050,000	1	ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգ	2020թ. դեկտեմբեր

TECHNICAL SPECIFICATION - PROCUREMENT SCHEDULE*

Service							
Lot number provided for by the invitation	Intermediate code provided for by the procurement plan, according to CPV classification	Technical specification	Measurement unit	Total price/AMD	Total quantity	Delivery	
						address	time limit**
1	99600000/1	Provision and organisation of services within the scope of the Programme "Armenian Virtual Bridge" outside the Republic of Armenia — in the USA. Technical specification attached****	AMD	694,050,000	1	State of California, USA	December 2020

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
Հայկական Բարեգործական ընդհանուր միությունը պարտավորվում է
Փուլ 1 (Այս փուլը ավարտվում է 01.06.2020)
TECHNICAL SPECIFICATION

Armenian General Benevolent union commits to

Stage 1 (the end of stage 1st is 01.06.2020)

1. ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի Սան Խոսե քաղաքում մինչև 250քմ տարածքով առանձնատուն կամ բնակարան՝ առնվազն 3 ննջասենյակով, հանգստի և բիզնես քննարկումներ անցկացնելու համար նախատեսված տարածքով:
1. To rent house or apartment with up to 250 meter square area in San Jose city in California USA, with at least 3 bedrooms, area anticipated for leisure and to conduct business discussions.
2. ապահովել նշված տարածքում գույքի, ներառյալ կահույքի, օդափոխության համակարգի, կենցաղային և էլեկտրական տեխնիկայի, այլ սարքեր և սարքավորումների, համակարգիչներ, բազմաֆունկցիոնալ պատճենահանման սարքի (scan and print) և ինտերնետ կապի առկայությունները
2. To provide the mentioned area with furniture, ventilation system, household and electrical technical, and other equipment as needed, computers, scan and printer, and the Internet.
3. Դրեյվերի համալսարանի ընդունելության հարցազրույցի փուլը անցկացնելու համար Դրեյվերի համալսարանի նախագահի և ընդունող հանձնաժողովի անդամների ՀՀ այցի շրջանակներում ապահովել Երևան քաղաքում հյուրանոցը և երկկողմանի Էկոնոմ դասի ավիատոմսը (Կալիֆոռնիա - Երևան - Կալիֆոռնիա ուղղությունով)
3. To provide the Draper University chairman and the accepting commission members in the framework of the visit to RA with the hotel in Yerevan, two-way economy class air-tickets (in the direction of California-Yerevan-California) to conduct the interview phase for the acceptance of Draper University
4. Դրեյվերի Համալսարան 5 մասնակիցների կրթաթոշակների փոխանցում համալսարանին (գումարի չափը սահմանված է առանձին պայմանագրով)
4. To transfer the scholarships of five participants to Draper University (the amount of money is defined via separate treaty (Contract)
5. Դրեյվերի Համալսարան 5 մասնակիցների Կալիֆոռնիա- Երևան- Կալիֆոռնիա ուղղությունով Էկոնոմ դասի ավիատոմսերի ձեռքբերում
5. The acquisition of economy class air tickets for Draper University's five participants in the direction of California-Yerevan-California
6. Առաջին փուլով «Վիրտուալ կամուրջ» ծրագրին մասնակցող մինչև 15 մասնակիցների Կալիֆոռնիա- Երևան- Կալիֆոռնիա ուղղությունով Էկոնոմ դասի ավիատոմսերի ձեռքբերում
6. During the first phase, the acquisition of economy class air tickets in the direction of California-Yerevan-California for those participating in the "Virtual Bridge" program

7. Ապահովել Հանրային իրազեկվածությունը և հասարակության լայն զանգվածների տեղեկացրածությունը ծրագրի իրականացման, ընթացքի և արդյունքների մասին
8. Կողմերը պարտավորվում են աշխատանքային կարգով՝ էլեկտրոնային փոստի միջոցով, նախապես համաձայնեցնել ցանկացած ծախսի հետ կապված հարց
9. Ապահովել ծրագրի մասնակիցների ընտրության կարգը, չափորոշիչները, ծրագրի օրակարգը և ծրագրի մասնակիցներին ընտրող հանձնաժողովի կազմը

7. To provide the public awareness and the awareness of wide masses of the society about the implementation and results of the program

8. The Parties undertake to agree in advance any cost related issue by working order via e-mail.

9. To ensure selection criteria for participants, list of selection committee members and agenda of the program

Փուլ 2 (Սկսվում է 02.06.2020 և ավարտվում է 30.12.2020)

Stage 2 (It starts 02.06.2020 and finished 30.12.2020)

1. Դրեյփերի Համալսարան 10 մասնակիցների կրթաթոշակների փոխանցում համալսարանին (գումարի չափը սահմանված է առանձին պայմանագրով)
2. Դրեյփերի Համալսարան 10 մասնակիցների Կալիֆոռնիա- Երևան- Կալիֆոռնիա ուղղությունով Էկոնոմ դասի տոմսերի ձեռքբերում
3. Երկրորդ փուլով «Վիրտուալ կամուրջ» ծրագրին մասնակցող մինչև 15 մասնակիցների Կալիֆոռնիա- Երևան- Կալիֆոռնիա ուղղությունով Էկոնոմ դասի տոմսերի ձեռքբերում
4. Իրականացվող ծրագրերի բրենդինգ, հասարակության լայն զանգվածների տեղեկացվածության բարձրացում
5. Աքսելերացիոն և ինկուբացիոն ծրագրերին մասնակցության ապահովում ծրագրի մասնակիցների համար:
6. Ապահովել նշված միջոցառման մարքեթինգային արշավի իրականացումը ՀՀ-ում և ԱՄՆ-ում
7. Կազմակերպել միջոցառումներ, որտեղ ծրագրի մասնակիցները կներկայացնեն իրենց ծրագրերը ներդրողների և վենչուրային հիմնադրամներին
8. Մասնագիտական կազմակերպության միջոցով, ՀՀ ԲՏԱ նախարարությանը ներկայացնել ծրագրի արդյունավետության ցուցանիշներ և արդյունքներ՝ հաշվետվության տեսքով:

1. The transfer of scholarships to the University for ten participants of Draper University (the amount of money is defined

2. The acquisition of economy class air tickets in the direction of California-Yerevan-California for ten participants of Draper University

3. During the second phase the acquisition of economy class air tickets in the direction of California-Yerevan- California for up to fifteen participants in the "Virtual Bridge" program

4. The promotion of implementing such programs, to increase awareness

5. To facilitate the participation in the acceleration and incubation programs for the program's participants

6. To provide the implementation of marketing campaign of the mentioned event in Armenia and USA

7. To organize events where the participants of the programs will represent their programs for the investors and Venture foundations

8. Through the professional organization to present the Ministry of High-Tech Industry of RA with the indexes of the program's effectiveness and results with the form of report

9. ՀՀ ԲՏԱ Նախարարությանը յուրաքանչյուր 3 ամիսը մեկ ներկայացնել հաշվետվություն կատարված ծախսերի և ստացված արդյունքների վերաբերյալ

9. Every three months provide to the Ministry of High Tech Industry of the RA report about the costs, expenses and results.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության
նախարարություն
Ք. Երևան Վ.Սարգսյան 3/3
ՀՀ ՖՆ գործարևական վարչություն

CLIENT
Ministry of High-Tech Industry
of the Republic of Armenia
3/3 V. Sargsyan Street, city of Yerevan
Operational Department of the Ministry of Finance of the Republic of



ՀՀ ԲՏԱ Պատվիրակ
Շ. Մեժլումյան
/ստորագրություն/
Վ.Տ

Armenia
No 900011031938
TIN 02565518
Secretary General
S. Mejlumyan
/signature/

ՎԱՏԱՐԱԴՐ

EXECUTOR

Հայկական բարեգործական ընդհանուր միություն
Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Նյու Յորք նահանգ 10022-1112,
ք.Նյու Յորք, 55-րդ Արևելյան 59-րդ փողոց

Armenian General Benevolent Union
55 East 59th Street, New York, NY 10022-1112

Email: agbuny@agbu.org
Բանկ.

Email: agbuny@agbu.org

CITIBANK, N.A. (Private Banking Department), 153 East 53rd Street, 24th Floor,
New York, NY 10022

CITIBANK, N.A. (Private Banking Department), 153 East 53rd Street, 24th
Floor, New York, NY 10022

Attn: Mr. Edeel Khokhar, Client Service Officer

Attn: Mr. Edeel Khokhar, Client Service Officer

ABA #: 021-000089

ABA #: 021-000089

Swift No.: CITIUS33

Swift No.: CITIUS33

Beneficiary/to the credit of:

Beneficiary/to the credit of:

Account # 999-5787841

Account # 999-5787841

ՀԲԱ կենտրոնական վարչության անդամ
Վասկեն Յակոբյան

Vasken Yacoubian
AGBU Central Board Member

/ստորագրություն/
Վ.Տ

/signature/

Seal

1	98391160/1	Provision and organization of services within the scope of the Programme "Armenian Virtual Bridge" outside the Republic of Armenia – in the USA.			115,000,000	350,000,000	350,000,000	350,000,000	350,000,000	450,000,000	450,000,000	490,000,000	694,050,000	694,050,000	694,050,000
---	------------	--	--	--	-------------	-------------	-------------	-------------	-------------	-------------	-------------	-------------	-------------	-------------	--------------------

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության
 նախարարություն
 Ը. Երևան Վ.Սարգսյան 3/3
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ 900011031938
 ՀՎՀՀ 02565518

CLIENT

Ministry of High-Tech Industry
 of the Republic of Armenia
 3/3 V. Sargsyan Street, city of Yerevan
 Operational Department of the Ministry of Finance of the Republic of
 Armenia
 No 900011031938
 TIN 02565518



Գլխավոր քարտուղար
 Շ. Մեղումյան

/ստորագրություն/
 Վ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Հայկական բարեգործական ընդհանուր միություն
 Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Նյու Յորք նահանգ 10022-1112,
 ք.Նյու Յորք, 55-րդ Արևելյան 59-րդ փողոց

Email: agbuny@agbu.org
 Բանկ.

CITIBANK, N.A. (Private Banking Department), 153 East 53rd Street, 24th Floor,
 New York, NY 10022

Attn: Mr. Edeel Khokhar, Client Service Officer

ABA #: 021-000089

Swift No.: CITIUS33

Beneficiary/to the credit of:

Account # 999-5787841



Secretary General
 S. Mejlumyan

/signature/

Seal

EXECUTOR

Armenian General Benevolent Union
 55 East 59th Street, New York, NY 10022-1112

Email: agbuny@agbu.org

CITIBANK, N.A. (Private Banking Department), 153 East 53rd Street, 24th
 Floor, New York, NY 10022

Attn: Mr. Edeel Khokhar, Client Service Officer

ABA #: 021-000089

Swift No.: CITIUS33

Beneficiary/to the credit of:

Account # 999-5787841

Vasken Yacoubian
 AGBU Central Board Member

ՀԲԱ կենտրոնական վարչության անդամ
 Վասկեն Յակոբյան

/ստորագրություն/
 Վ.Տ

/signature/

Seal

Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____

 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____

 հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴԻԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » 2020թ.
 Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
 Պայմանագրի կնքման ամսաթիվը՝
 Պայմանագրի համարը՝
 Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2020թ. դուրս
 գրված N հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
 Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Մատուցված ծառայությունների								
N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ չարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացու յցի/
			ըստ պայմանագ րով հաստատվ ած գնման ժամանակա ցույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույ ցի	փաստացի		
			1	1				

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական
 եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

Ծառայությունն ընդունեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

Party to the Contract

Registered office _____

IN _____

TIN _____

CLIENT

Registered office _____

IN _____

TIN _____

**TRANSFER AND ACCEPTANCE PROTOCOL No
ON DELIVERY AND ACCEPTANCE OF RESULTS OF THE PERFORMANCE
OF THE CONTRACT OR A PART THEREOF**

_____ 2020

Title of the contract (hereinafter referred to as "the Contract") _____

Date of conclusion of the Contract:

Contract number:

Client and Party to the Contract, taking as a basis Invoice No _____ on the performance of the Contract, written off on _____ 2020, drew up this Protocol on the following:

Party to the Contract has, under the terms of the Contract, provided the following services

Services provided								
No	Name	Summary of the technical specification	Quantity index		Performance period		Amount subject to payment (thousand drams)	Time limit for payment (according to the Payment Schedule)
			According to the Procurement Schedule approved by the Contract	Actual	According to the Procurement Schedule approved by the Contract	Actual		
			1	1				

The Invoice and the positive opinion having served as a basis for the bilateral approval of this Protocol shall constitute an inseparable part of this Protocol and shall be attached thereto.

Service delivered by

signature

name, surname

Seal

Service accepted by

signature

surname, name

Seal

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

ACT No

on fixing the fact of delivering to the Client the deliverable under the Contract

It is hereby recorded that within the scope of Contract No _____ concluded
number of the Contract
between _____ (hereinafter referred to as "the Client")
name of the Client
and _____ (hereinafter referred to as "the Executor")
name of the Executor
on _____ 20__ the Executor delivered the services indicated below to
date of conclusion of the Contract
the Client for the purpose of delivery and acceptance on _____ 20__

Service		
Name	Measurement unit	Quantity (actual)

This Act shall be drawn up in two copies, and each Party shall be provided with one copy.

PARTIES

Delivered by

Accepted by

The representative having drafted the bid:

surname, name

signature

surname, name

signature